

Ատենազրուօթիւն
Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ
Հայաստանեայց Եկեղեցւոյ Միական Ժողովի

Կիրակի, Փետրուար 13, 1977

Ուիւնուտի (Փենսիլվանիա) Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Հայց. Եկեղեցւոյ տարեկան Միական Ժողովը գումարուեցաւ եկեղեցւոյս սրահին մէջ, Կիրակի Փետր. 13-ին, 1977, կէսօրէ ետք ժամը 1.15-ին, նախագահութեամբ Հովիւին, Հոգշ. Տ. Զաւէն Մ. Վրդ. Արզումանեանի: Առժամեայ ատենապետութիւնը վարեց Միական Խորհուրդի ատենապետ Պրն. հորճ Տէվլէթեան:

Ստուգուելէ ետք համայնքիս տրատու 347 անդամներէն 115-ի ներկայութիւնը, Հայր Սուրբը իր աղօթքով բացուած յայտարարեց Միական Ժողովը, թելադրելով որ ներկաներ չմեկնին քուէարկութենէն ետք եւ մնան մինչեւ ժողովին աւարտիլը:

Դիւանի Ընտրութիւն.

Դիւանի անդամոց համար կատարուած ձեռամբարձ ընտրութիւնը տուաւ հետեւեալ արդիւնքը. — Պրն. Մարկոս Մամուրեան, ատենապետ եւ Տիկ. Վիգթորիա Իլվանեան, ատենադպիր:

Ատենազրուօթեան Ընթերցում.

Ժողովիս ատենադպիրը կարդաց Նախորդ Միական Ժողովի (Փետրուար 1, 1976) ատենազրուօթիւնը որ նոյնութեամբ վաւերացուեցաւ: Ապա ատենապետի թելադրութեամբ եւ ժողովի որոշմամբ տեղի ունեցան Միական Խորհուրդի դադարեալ վեց անդամոց տեղ նորերու ընտրութիւնը, ինչպէս նաեւ հաշուեքննիչ եւ ընտրողական յանձնախումբերու ընտրութիւնները, պատրաստուած ցանկերուն վրայէն:

Հովիւի Տեղեկագիրը.

Ժողովիս ատենապետը հրաւիրեց եկեղեցւոյս հոգեւոր հովիւը, Հոգշ. Տ. Զաւէն Մ. Վրդ. Արզումանեան որ կարդայ տարեկան իր տեղեկագիրը: Հոգշ. հայր սոբրբը կարդաց իր խնամքով պատրաստած 1976 տարուան տեղեկագիրը որ կ'ընդգրկէր բոլոր պաշտամունքներու եւ այլազան գործունէութեանց ամփոփ տեղեկութիւնները, ինչպէս նաեւ այլազան բացառիկ ձեռնարկներ, ինչպէս դասախօսութիւններ, հայ օտար ազգային ու եկեղեցական հանդիհումներ: Տեղեկագիրը կը ցուցնէր Հովիւի մը նուիրական ու զոհաբերող պաշտօնը, որուն փակման հայր սուրբը իր գնահատանքի ու շնորհակալութեան խօսքը յայտնեց Միական Խորհուրդին, ինչպէս նաեւ ենթակայ բոլոր կազմակերպութեանց իրենց ցոյց տուած արդիւնաւից եւ համերաշխ գողծակցութեան համար: Հովիւին տեղեկագիրը ընդունուեցաւ բուռն ծափահարութեամբ եւ զնահատանքով:

Միական Խորհուրդի Տեղեկագիրը.

Միական Խորհուրդի ատենապետ Պրն. հորճ Տէվլէթեան կարդաց իր պատրաստած տեղեկագիրը յիշելով տարուան ընթացքին կատարուած նորոգութեանց եւ բարեփոխութեանց հետ կապուած ամէն գործունէութիւն, նիւ-

Armenian Church of North America

Seventy-fourth Diocesan Assembly
Post Office Box 143
Wynnewood, Pennsylvania 19096

St. Sahag-St. Mesrob Armenian Church
Very Rev. Zaven Arzoumanian
Mi 2-4212

Holy Trinity Armenian Church
Very Rev. Arshen Aivazian
Es 9-2515

Թական եւ բարոյական գետնի վրայ: Ատենապետը գնահատանքի խօսք ուղղեց եկեղեցւոյս նուիրեալ ծխականներուն եւ բարեկամներուն, ինչպէս նաեւ յարգալից հիացումով ու երախտագիտութեամբ արտա- յայտուեցաւ հայր սուրբի ներշնչիչ ու ձեռնհաս առաջնորդութեան մասին, որուն շնորհիւ յաջող եւ արդիւնաբեր տարի սը բոլորուեցաւ արձանագրելով փայլուն էջ մը Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ եկեղեցւոյ պատմութեան մէջ: Պրն. Տէվլէթեանի տեղեկագիրը գնահատանքով եւ ծափահարութեամբ ընդունուեցաւ:

Ծխական Խորհուրդի ատենապետ Պրն. Տէվլէթեան ժողովականներուն առ ի տեղեկութիւն յայտնեց հետեւեալ որոշումները որոնք առնուած էին տեղեկագիրներու տպագրութենէն ետք.-

- (ա) Եկեղեցւոյս դպրոցի բաժնի դասարաններէն երեքը վարձու պիտի տրուին Մոնթեսորի դպրոցի մը Յուլիս 1, 1977-էն սկսեալ:
- (բ) 1977 Մարտ 1-էն սկսեալ Պրն. ճան Գաբրիկեան վճարովի պիտի ստանձնէ եկեղեցւոյս շէնքերուն վերահսկիչի եւ հոգատարութեան գործը:
- (գ) Առաջնորդարանէն վերջերս ստացուած էր նամակ մը եւ անոր կցուած Թեմիս ծխատէր հովիւներուն յատկացուելիք տարե- վճարներու նոր դրութիւն մը: Ատենապետը կարողաց նամակը եւ տեղեկացուց թէ Ծխական Խորհուրդը հարկ եղած կարգա- դրութիւնը պիտի ընէ համաձայն ներկայացուած դրութեան:

Ենթակայ կազմակերպութեանց Տեղեկագիրները.

Ատենապետ Պրն. Սամուրեան յայտնեց թէ եկեղեցւոյս ենթակայ բոլոր կազմակերպութեանց տեղեկագիրները կանխօրօք տպագրուած եւ անդամներուն ղրկուած ըլլալուն համար զանց պիտի առնուէր անոնց ընթերցումը: Այսուհանդերձ ժամանակ տրուեցաւ հարցումնե- րու որոնց կարգին եղան հետեւեալ երկու ճշգումները.-

- (ա) Տիկ: Տիգրանուհի Կարապետեան ժողովիս ուշադրութեանը յանձնեց որ Հայ Դպրոցի յառաջիկայ տարուան տեղեկագրին մէջ երեւի նաեւ նիւթական գողծառնութեանց հաշուեկշիռը:
- (բ) Պրն. Հէրրի Հօփլամագեանի կողմէ Ծխական Խորհուրդի ու- շադրութեան յանձնուեցաւ մնայուն հիմնադրամի յանձնախումբի տեղեկագիրը եւ թելադրուեցաւ որ աւելի ճշգրիտ եւ լրիւ հաշուեկշիռ մը երեւի յառաջիկայ տարուան իրենց տեղեկագրին մէջ, ուր երեւի նաեւ զանց առնուած "Սէմէրճեան Հիմնադրամ"ի անունն ու համապատասխան գումարը: Այս հարցը Ծխական Խոր- հուրդի միջոցաւ պիտի փոխանցուի մնայուն հիմնադրամի վարչութեան առ ի քննութիւն:

Ցանուն բոլոր կազմակերպութեանց ատենապետը իր շնորհակալու- թիւնները յայտնեց: Պրն. Աւետիս Ալապիլիքեան եւ Թեմական Պատգամա- ւոր Պրն. Փօլ Զարգարեան ձայն խնդրեցին եւ ժողովականներուն կող- մէ գնահատանք եւ երախտագիտութիւն յայտնեցին մեր հովիւին, որ

Armenian Church of North America

Seventy-fourth Diocesan Assembly
Post Office Box 143
Wynnewood, Pennsylvania 19096

St. Sahag-St. Mesrob Armenian Church
Very Rev. Zaven Arzoumanian
Mi 2-4212

Holy Trinity Armenian Church
Very Rev. Arshen Aivazian
Es 9-2515

իմաստութեամբ առաջնորդած էր իր ԿԵ Կօտը, եւ զնահատեցին Միական Խորհուրդի եւ բոլոր կազմակերպութեանց նուիրական շանքերը ի փառս եկեղեցւոյս պայծառացման:

Տարեկան Հաշուեկշիռն ու նախահաշիւը.

Արդէն իսկ պատրաստուած 1976-ի Հաշուեկշիռը քննուեցաւ եւ զոհացուցիչ գտնուելով զնահատուեցաւ: Ժողովականներ զնահատանքով Հաստատեցին որ Միական Խորհուրդը կարողացած է եկեղեցւոյս Հանդիսասրահի եւ "փարքինկ"ի նորոգութեանց համար ծախսուած \$150,000.ի գումարէն վճարել արդէն իսկ \$100,000. Թողլով միայն \$50,000-ի պարտք մը:

Միական Ժողովս վաւերացուց նաեւ 1977-ի համար պատրաստուած \$99,500.00-ի նախահաշիւը:

Ընտրութեանց Արդիւնքները.

Նախապէս պատրաստուած Միական Խորհուրդի թեկնածուներու ցանկէն Պրն. Փօլ Պապիկեան բանաւոր պատճառով հրաժարած էր: Անոր փոխարէն ժողովը ընտրեց Պրն. Մարկոս Մամուրեան, լրացնելով պահանջուած 12 թիւը:

Միական Խորհուրդի համար ընտրուեցան հետեւեալ վեց անդամները.

1. Արամ Ճայտա	96	քուէ
2. Նուպար Գարակիւլեան	95	
3. Նուպար Մարգարիտեան	87	
4. Բարդէն Սկրեան	68	
5. Մարկոս Մամուրեան	66	
6. Ռոզ Հօփլամագեան	64	

Անձնափոխանորդներ

7. ճորճ Ծակոբեան	45	
8. Արմէն Աստուրեան	35	

Հաշուեքննիչ յանձնախումբի համար ընտրուեցան հետեւեալ երեք անդամները.

1. Տիրան Շաքարճեան	73	քուէ
2. Մարկոս Մամուրեան	73	
3. Ռիչըրտ Բէքճեան	69	

Ընտրողական յանձնախումբի համար ընտրուեցան հետեւեալ երեք անդամները.

1. Ալիս Առաքելեան	88	քուէ
2. Արամ Զաքեան	82	
3. Միլլի Պարսամեան	72	

Armenian Church of North America

Seventy-fourth Diocesan Assembly
Post Office Box 143
Wynnewood, Pennsylvania 19096

St. Sahag-St. Mesrob Armenian Church
Very Rev. Zaven Arzoumanian
Mi 2-4212

Holy Trinity Armenian Church
Very Rev. Arshen Aivazian
Es 9-2515

Նոր Հարցեր:

1. Միական Խորհուրդէն Տիար հորճ Մանկիկեան շերմօրէն խնդրեց որ համայնքիս ծնողները շատ աւելի հոգածու ըլլան մեր երիտասարդաց կազմակերպութեան ձեռնարկներուն նկատմամբ եւ քաշալերեն զիրենք իրենց ներկայութեամբը: Պրն. Մանկիկեան էյ. Սի. Ուայ. Օ. էյ-ի մօտ Միական Խորհուրդի ներկայացուցիչն է:

2. Եկեղեցւոյս տրատու անդամներուն թիւը աւելցնելու յատուկ ծրագիր մը հարկ է մշակել եւ գործադրել: Հարցը յանձնուեցաւ Միական Խորհուրդի ուշադրութեան որ իր կարգին մասնաւոր յանձնախումբ մը պիտի նշանակէ այս հարցով զբաղելու համար: Թելադրուեցաւ նաեւ որ համայնքիս տարեցներու կազմակերպութենէն թերեւս կարելի կ'ըլլայ անձեր գտնել որոնք պարբերական այցելութիւններով կարենան հաւաքել չվճարուած անդամատուրքերը:

3. Պրն. Նիկողոս Պօյաճեան առաջարկեց որ Տարեկան Միական ժողովներու ընթացքին Միական Խորհուրդի անդամները լրիւ կազմով տեղ գրաւեն օրուան դիւանի կողքին: Առաջարկը երկրորդուեցաւ եւ սակայն չքուէարկուեցաւ:

4. Եկեղեցւոյս հովիւը հակիրճ բացատրութիւն մը տուաւ Ամերիկահայ Թեմի միութեան աշխատանքներուն մասին: Ան յանուն Միական Խորհուրդիս կարողաց յայտարարութիւն մը որով կը բացատրուէր հովիւի եւ Միական Խորհուրդի վստահութիւնն ու ուղիղ կեցուածքը հանդէպ Թեմիս Առաջնորդ Սրբազանին, Թեմական Խորհուրդին, եւ Թեմական Պատգամաւորական ժողովին, իրենց միութենական աշխատանքներուն վերաբերեալ առած եւ առնելիք քայլերուն նկատմամբ: Սոյն յայտարարութիւնը ժողովին կողմէ միաձայնութեամբ որդեգրուեցաւ եւ կցուեցաւ սոյն ատենագրութեան:

Օրակարգի հարցերն սպառած ըլլալով օրուան նիստը փակուեցաւ նախագահ հայր սուրբի փակման աղօթքով կէսօրէ ետք ժամը 3.45-ին:

ԶԱՒԷՆ Ծ.Վ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ
Նախագահ

ՎԻԳՔՈՐԻԱ ԻԼՎԱՆԵԱՆ
Ատենադպիր

ՄԱՐԿՈՍ ՄԱՍՈՒՐԵԱՆ
Ատենապետ

Armenian Church of North America

Seventy-fourth Diocesan Assembly
Post Office Box 143
Wynnewood, Pennsylvania 19096

St. Sahag-St. Mesrob Armenian Church
Very Rev. Zaven Arzoumanian
Mi 2-4212

Holy Trinity Armenian Church
Very Rev. Arshen Aivazian
Es 9-2515